

## Նարեկ Գալստյան

ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի քաղաքագիտության ամբիոնի  
ասպիրանտ

### Եվրոպական ինտեգրման հայեցակարգերը

Միջազգային հարաբերությունների զարգացման արդի փուլում միջազգային, մասնավորապես, եվրոպական ինտեգրումն իրենից ներկայացնում է բազմաշերտ, բազմավեկտոր մի գործընթաց, որի ուսումնասիրությունը չի սահմանափակվում ավանդական քաղաքական տեսության շրջանակներով: Արդի համաշխարհային գործընթացների իմացության համատեքստում ինտեգրման երևույթն արժանանում է առանձնահատուկ ուշադրության և տարատեսակ մեկնաբանությունների:

Ընդհանուր առմամբ, ինտեգրման տեսությունների հեղինակների ուշադրության կենտրոնում գտվել են հասարակությունների, մասնավորապես, եվրոպական երկրների կյանքից պատերազմների բացառման նախադրյալների, հիմքերի և մեխանիզմների հարցերը: Թեև համաեվրոպական մակարդակում որոշումների ընդունման համար այդ տեսությունները լիարժեք հայեցակարգային հիմք չեն հանդիսացել, սակայն, էական դեր են խաղացել եվրոպական ինտեգրման տեսական իմաստավորման և միասնական Եվրոպայի ապագա մոդելի ուրվագծման համար:

Այսպես, եվրոպական միավորման ողջ պատմության ընթացքում *ֆեդերալիստական* մոտեցումն ունեցել է նշանակալի գործնական կիառություն, քանզի, ի տարբերություն տեսական շատ այլ ուղղությունների, ֆեդերալիզմն ունի ինտեգրման հստակ նպատակ՝ դաշնային կառուցվածքով «հետազգային» պետության կառուցումը: Այս համատեքստում ֆեդերալիզմը կարելի է բնորոշել որպես համաձայնություն, որի նպատակն է *ընդհանուր* խնդիրների համար գտնել քաղաքական *ընդհանուր* լուծումներ և մշակել *ընդհանուր* քաղաքականություն:

Ֆեդերալիստներն առաջ քաշեցին ինստիտուցիոնալ հատուկ (դաշնային) կառուցվածքի ձևավորման մասին թեզը, որն ունի և՛ ինտեգրվող միավորների միջև փոխազդեցությունների բնույթ, և՛ հատկանշում է լիազորությունների բաշխումը մի կողմից նրանց և, մյուս կողմից, առաջացող «միասնական կենտրոնի» միջև: Ինչպես պնդում է Փ. Ֆոնտայնը, համապատասխան մակարդակի իշխանություններից և ոչ մեկը չպետք է ունենա առավելություններ. տեղական, տարածաշրջանային, ազգային և եվրոպական

մասշտաբի մարմինների լիազորությունները պետք է լինեն համահունչ և փոխընդանուր<sup>1</sup>: Այլ կերպ ասած, ապագա «նոր Եվրոպայի» կառավարման մարմինները չպետք է օժտված լինեն բացառիկ լիազորություններով:

Ֆեդերալիստների համոզմամբ, հենց դաշնության ստեղծումը Եվրոպայում կբացառի պետությունների միջև տարածայնությունների կարգավորման գործում բռնության կիրառման անհրաժեշտությունը, քանզի դաշնության բարձրագույն արժեքներ կդառնան անվտանգությունն ու խաղաղությունը<sup>2</sup>:

Սակայն, չնայած իր առավելություններին (ինտեգրման գործընթացի վերջնական նպատակի կոնկրետացումը, «ճանապարհային քարտեզի» մշակման անհրաժեշտության հիմնավորումը), ֆեդերալիզմը որոշակիորեն անտեսում է ինտեգրման՝ որպես անընդհատ զարգացման ընկալման հիմքում ընկած գործընթացային բաղկացուցիչը: Ավելին, ֆեդերալիզմը ձգտում է սանձել ազգային ինքնիշխանությունն իր իսկ միջոցով: Բայց, ինչպես ապացուցում է եվրոպական ինտեգրման ողջ պատմությունը, ազգային պետությունները մեծ դժկամությամբ են անգամ մասամբ փոխանցում իրենց ինքնիշխան լիազորությունները վերազգային ինստիտուտներին, իսկ ԵՄ անդամների կազմի ընդլայնումն ազդակ է հանդիսանում կենտրոնախույս ուժերի՝ ինքնիշխանության հնարավորինս պահպանման կողմնակիցների ակտիվացման համար, քանզի նոր անդամները դեռևս լիարժեք չեն օգտվում ինտեգրման արդյունքներից և առավել հակված են իրենց համագործակցությունը կառուցել միջկառավարական մեխանիզմների վրա:

Առաջ է գալիս նաև մտավախություն, որ դաշնությունը, կանխելով հակամարտություններն իր կազմի մեջ մտնող համեմատաբար փոքր պետությունների միջև, արտաքին հզոր ուժերի հետ մրցակցության ընթացքում կարող է դառնալ խոշոր հակամարտությունների աղբյուր:

*Ֆունկցիոնալիստական* մոտեցման հիմնադիր Դ. Միթրանիի համոզմամբ, գնալով խորացող տեխնիկական-ոչ քաղաքական համատեղ գործունեության և կառավարչական խնդիրների ցանցի կառուցման հիման վրա գործընկեր-պետությունների միջև հետզհետե կկարգավորվեն նաև քաղաքական հարցերը<sup>3</sup>: Աստիճանաբար կկազմավորվի յուրահատուկ գործառույթներով օժտված միջազգային կազմակերպությունների ցանց, ապա գործակցության այս ձևը կփոխանցվի մյուս ոլորտներին՝ վերջնական արդյունքում հանգեցնելով ազգային պետության քայքայման:

<sup>1</sup> St' u Fontaine P. Europe in ten points, 2<sup>nd</sup> ed. Luxembourg: Office for official publications of the European Communities, 1995. P. 5  
<sup>2</sup> St' u Bellers J. Integrationstheorien, in: Pipers Wörterbuch zur Politik, Bd. 3, München 1985, S. 354-362  
<sup>3</sup> St' u Bergmann K. Integrationstheorien in: Lexikon der Politik, Band I, Politische Theorien, Dieter Nohlen und Rainer-Olaf Schultze (Hrsg.), München, 1995, S. 214

Ֆունկցիոնալիստները կտրականապես դեմ են արտահայտվում ամուր ինստիտուցիոնալ շրջանակներով վերազգային դաշնային քաղաքական միավորմանը և պնդում, որ պետությունների միջև պատերազմները կանխելու համար անհրաժեշտ է ոչ թե գտնել միջազգային հանրության իդեալական ձև, այլ սահմանել այն գործառույթները, որոնք այդ հանրությունը պետք է իրականացնի<sup>1</sup>:

Այս հայեցակարգի հիմնարար գաղափարներից մեկը կայանում է նրանում, որ միջազգային ինտեգրումը պետք է լինի առավելագույնս ապաքաղաքականացված, իսկ պետությունների արդյունավետ համագործակցությունն ու հակամարտություններից խուսափումը կարող են և պետք է ձեռք բերվեն բոլորի համար ընդհանուր՝ բարեկեցության հարցերում ջանքերը կենտրոնացնելու միջոցով<sup>2</sup>:

Սակայն, ինչպես ցույց տվեց եվրոպական ինտեգրման պատմությունը, ֆունկցիոնալիստների նախանշած գործառութային կազմակերպություններին այդպես էլ չի հաջողվել ազատվել քաղաքականացվածությունից, իրենց ջանքերն ուղղել բացառապես գործառութային խնդիրների լուծմանը: Եվ դա լիովին բանական է. թեև ինտեգրացիոն ինստիտուտները կոչված էին ապահովելու տնտեսական զարգացումը, այդուհանդերձ, նրանք չէին կարող զերծ մնալ տնտեսության և քաղաքականության փոխազդեցություններից: Ավելին, այսօր, երբ այդ ինստիտուտների վրա դրվում են նաև քաղաքական ինտեգրման խնդիրներ, ֆունկցիոնալիստական մոտեցումները բոլորովին կորցնում են իրենց արդիականությունը:

*Նորաֆունկցիոնալիստական* մոտեցման համաձայն, ինտեգրման գործընթացի հետևողականությունն ու կառուցվածքը ենթադրում են հզոր կենտրոնական ինստիտուտների համակարգի ձևավորում և մասնակից-պետությունների կողմից իրենց ինքնիշխանության աստիճանական փոխանցում ընկերակցության մակարդակ: Այս գործընթացում մասնակից-պետությունները խաղում են բավական պասիվ դեր և ոչնչով չեն առանձնանում ակտորների ընդհանուր զանգվածից: Մինչդեռ, օրինակ, ԵՄ Հանձնաժողովը հանդես է գալիս որպես ակտիվ կազմակերպիչ և ինտեգրման գործընթացի «ռգեչնչող», իսկ կազմակերպված խմբերը, կուսակցությունները և քաղաքական ընտրանիներն իրականացնում են ինտեգրման յուրօրինակ «խթանիչի» դեր:

Նորաֆունկցիոնալիստներն ընդգծում են վերազգային ինստիտուտների դերն ինտեգրման առաջընթացի համար: Դրանց վերազգային բնույթը դիտարկվում է ոչ միայն որպես գործառութային առավելություն, որը թույլ է տալիս լավագույնս առանձնացնել և պաշտպանել ինտեգրման մասնակիցների ընդհանուր շահերը, այլև որպես ինտեգրման

<sup>1</sup> Տե՛ս Шемятенков В. Г., Европейская интеграция. Учебное пособие. М. 2003, с. 321-322

<sup>2</sup> Տե՛ս European integration: theories and approaches/ Ed. by H. Michelmann, P. Soldatos, Lanham, MD: University Press of America, 1994, P. 9

ամրության և անշրջելիության գլխավոր երաշխիքը: Լինելով մեկ անգամ ստեղծված՝ այդ ինստիտուտները ձեռք են բերում ինքնուրույն զարգացման ունակություն:

Նորաֆունկցիոնալիստների առաջ քաշած «ցայտյունի» հայեցակարգի տրամաբանությունը ենթադրում է նորանոր ոլորտների վրա ինտեգրման տարածում և դրա որակական զարգացման անհրաժեշտություն, այսինքն՝ անցում ինտեգրման ցածր ձևերից առավել բարձրերին: ԵՄ շրջանակներում առկա համագործակցությունը քաղաքականության մի շարք ոլորտներում «ցայտյունի» էֆեկտի պատճառով տարածվում է նաև քաղաքականության մյուս ոլորտների վրա, և այդ պատճառով համագործակցությունը ԵՄ շրջանակներում գտնվում է մշտական զարգացման մեջ<sup>1</sup>:

Ինտեգրման *միջկառավարական* մոտեցման շրջանակներում ԵՄ-ը դիտարկվում է որպես պետությունների միություն, որտեղ կենտրոնական ակտորներն այդ պետություններն են: Եվ եթե համատեղ ինստիտուտների ազդեցությունը չափազանց փոքր է, ապա մեծ դեր են խաղում անդամ-պետությունների ազգային շահերը, որոնք չեն կարող փոխարինվել համաեվրոպական շահերով:

Է. Մորավչիկի կարծիքով, ինտեգրման գործընթացն իրենից ներկայացնում է երկմակարդակ խաղ: Ազգային շահերի ձևավորման մակարդակում դրսևորվում են տարբեր քաղաքական ու սոցիալական խմբերի համաձայնեցման և պետության ու հասարակության փոխազդեցության առանձնահատուկ օրինաչափությունները: Այդ գործընթացի արդյունք հանդիսանում են նախապատվելի որոշակի նպատակների իրականացումը («ինտեգրման պահանջմունք»), որով պետությունը դուրս է գալիս խաղի երկրորդ մակարդակ՝ առևտուր միջկառավարական մակարդակում («ինտեգրացիոն որոշումների առաջարկ»)<sup>2</sup>:

Է. Մորավչիկը վճռորոշ դեր տալիս է առաջին մակարդակին և պնդում, որ ներքին քաղաքականությունն արտաքին քաղաքական առևտրի նախապայմանն է: Դա բացատրվում է նրանով, որ ցանկացած կառավարության բարձրագույն խնդիրն իշխանության պահպանումն է, ինչի համար կառավարությունը պետք է ստանա բավական ուժեղ քաղաքական կոալիցիայի աջակցությունը, պաշտպանի առավել ազդեցիկ խմբերի շահերն ու նրանց կողմից առաջարկվող քաղաքական այլընտրանքները և ամեն կերպ ձգտի դրանք իրագործել միջազգային թատերաբեմում: Սակայն հենց այստեղ պետությունները ցուցաբերում են հակասական վարք, երբ գիտակցաբար ընդունում են իրենց ինքնավարությունը ֆորմալ կերպով սահմանափակող որոշումներ՝ փոխարենը ստանալով կարգավորված առևտրի առավելություններ ավելի լայն դաշտում՝

<sup>1</sup> St' u Häckel E., Theorien internationaler Integration und internationaler Organisationen, in Volker Rittberger (Hrsg.). Theorien der internationalen Beziehungen, PVS-Sonderheft 21 (1990), S. 286-310

<sup>2</sup> St' u Moravcsik A. Liberalism and International Relations Theory. Harvard University Center for International Affairs. Paper N92-6, 1992, P. 7

ինտեգրացիոն ինստիտուտների ներսում, ինչպես նաև այնպիսի ինֆորմացիա, որն այլ պայմաններում անհասանելի կլիներ: Այդ պատճառով ինտեգրացիոն ինստիտուտները միջկառավարական առևտուրը վերածում են դրական գումարով խաղի:

Չժտելով միջկառավարական մոտեցման հիմնասկզբունքների արդարացիությունը՝ միաժամանակ հարկ է ընդգծել, որ այստեղ թերազնահատվում է ինտեգրացիոն ինստիտուտների ազդեցությունն ազգային պետության և ընդհանրապես ինտեգրման վրա՝ դրանով իսկ դասական միջազգային կազմակերպություններն ու ինտեգրացիոն ընկերակցությունները դիտարկելով միևնույն հարթության վրա:

Ժամանակակից եվրոպական հետազոտությունների շրջանակներում նշանակալի տեղ են զբաղեցնում նաև *քաղաքական ցանցերի* հայեցակարգերը: Քաղաքական ցանցն իրենից ներկայացնում է համագործակցության մի շրջանակ, որտեղ համամասնաբար շահում են բոլոր մասնակիցները («հաղթանակ-հաղթանակ» իրավիճակ): ԵՄ-ը և նրա ինստիտուտներն իրենցից ներկայացնում են քաղաքական ցանցերի ամբողջություն, որոնց շրջանակներում կողմերի ստացած առավելությունները նրանց շահագրգիռ են դարձնում ինտեգրման զարգացման մեջ<sup>1</sup>:

Ըստ էության, հենց այս հայեցակարգի տրամաբանությամբ էլ կարելի է մեկնաբանել եվրոպական ինտեգրացիոն համակարգի ներքին միջավայրի էությունը, այն է՝ անդամ-պետությունների և նրանց ու ինտեգրացիոն ինստիտուտների փոխշահավետ փոխգործակցությունը:

Հարկ է անդրադառնալ նաև *բազմամակարդակ ղեկավարման* տեսությանը, որի շրջանակներում անդամ-պետությունների պետական պաշտոնյաները հանդես են գալիս ընդամենը որպես եվրոպական քաղաքական համակարգի ներսում գործող խմբերից մեկը: Ավելին, ԵՄ-ում ներքին քաղաքականության և միջկառավարական առևտրի շրջանակներում պետությունները չեն հանդիսանում բացառիկ կապող օղակ: Այս տեսության կողմնակիցները ելակետ են ընդունում բազմամակարդակ քաղաքական ցանցերի խաչաձևման գաղափարը<sup>2</sup>: Այս տեսանկյունից ԵՄ-ը հանդես է գալիս որպես այնպիսի քաղաքական կազմավորում, որտեղ իշխանությունը բաժանված է ղեկավարման տարբեր մակարդակների և ակտորների միջև, ըստ որում, այդ մակարդակներում ղեկավարման մեթոդներն էապես տարբերվում են միմյանցից:

Այս մոտեցման որոշ ներկայացուցիչներ տարբերություն են անցկացնում ԵՄ-ում որոշումների ընդունման երեք մակարդակների միջև, որոնցից յուրաքանչյուրն ունի իր սեփական տրամաբանությունը: Այդ մակարդակներն են՝

<sup>1</sup> St' u Peterson J. Policy Networks and European Union Policy Making: A Reply to Kassim // West European Politics. 1995. N18 (2). P. 391

<sup>2</sup> St' u Marks G., Nielsen F., Ray L. and Salk J. Competences, Cracks and Conflicts: Regional Mobilization in the European Union // Governance in the European Union. London, 1996. P. 41

1. «գերհամակարգային» կամ «պատմական որոշումների» ընդունման մակարդակը, որը փոփոխում է ԵՄ-ը որպես քաղաքական համակարգ: Դա հենց ինտեգրման մակարդակն է բառի բուն իմաստով: Հենց այս մակարդակն է հանդիսանում ինտեգրման ավանդական տեսությունների առարկան;
2. «համակարգային» կամ «քաղաքականության իրականացման» մակարդակը, որտեղ տեղի է ունենում ինտեգրացիոն ինստիտուտների գործնական վերափոխումը: Այս գործընթացը տեսական առումով լավագույնս ներկայացնում է նոր ինստիտուցիոնալիզմը;
3. «մեզոհամակարգային» կամ «քաղաքականության ձևավորման» մակարդակը, որտեղ շահերի համաձայնեցման միջոցով տեղի է ունենում ռազմավարական որոշումների և գործնական քաղաքականության մշակումը: Այս գործընթացի օրինաչափությունները լավագույնս բացահայտում է քաղաքական ցանցերի տեսությունը:

Այս տեսության շրջանակներում ժամանակակից ԵՄ քաղաքական համակարգը հանդես է գալիս որպես միջկառավարական և վերազգային քաղաքականության մակարդակները միակցող մի կոնստիտուում, որի շրջանակներում միջկառավարական քաղաքականությունն իրենից ներկայացնում է սովորական միջազգային հարաբերությունների պարզ տարատեսակ, իսկ վերազգային մակարդակն արտահայտվում է անդամ-պետություններին ընդգրկող ղեկավարման ներուժի նկատմամբ կենտրոնացված հսկողության մեջ: Այս բևեռների միջև տեղաբաշխվում են ղեկավարման բոլոր միջանկյալ ձևերը, որոնց կոորդինատները կոնստիտուումի մեջ որոշվում են երեք փոփոխականներով՝ ԵՄ մակարդակում ամրագրված ֆորմալ և ոչ ֆորմալ կանոններով, ԵՄ մակարդակում ղեկավարման կառուցվածքներով և անդրազգային հասարակության զարգացման մակարդակով<sup>1</sup>:

Այս տեսության կարևորագույն առավելություններից մեկը կարելի է համարել այն, որ ընդգծվում է ինտեգրացիոն համակարգի շրջանակներում սերտ փոխկապակցվածության առկայությունը քաղաքականության վերազգային, ազգային և տարածաշրջանային մակարդակների միջև:

Քաղաքագիտական գրականության մեջ բավական լայն տարածում ունի նաև *րազմամակարդակ ինտեգրման* հայեցակարգը: Այդ գաղափարն ավանդաբար կապվում է երեք հիմնական՝ «տարբերակում», «ճկունություն» և «առավել սերտ համագործակցություն» ընդհանուր եզրերի հետ: «Առավել սերտ համագործակցությունն» առավելապես համահունչ է միջկառավարական մոտեցմանը, մինչդեռ «տարբերակում» և

<sup>1</sup> St' u Europa - ABC, Integrationstheorien - [www.europaspiegel.de/index/glossar/Integrationstheorien](http://www.europaspiegel.de/index/glossar/Integrationstheorien)

«Ճկունություն» հասկացությունների ենթատեքստում արտահայտվում է բազմամակարդակ ինտեգրման մոդելի էությունը:

Այս հայեցակարգի շրջանակներում առավել հաճախ օգտագործվում են նաև երեք հասկացություններ՝ Եվրոպա *a' la carta*, «տարբեր արագությունների» Եվրոպա և «տատանվող երկրաչափություն»:<sup>1</sup> Ի տարբերություն մյուս երկու հասկացությունների, Եվրոպա *a' la carta*-ն մերժում է բոլոր անդամ-պետությունների համար միասնական իրավական ժառանգության՝ որպես ինտեգրման գործընթացի վերջնակետի անհրաժեշտությունը և ենթադրում յուրաքանչյուր անդամի կողմից այն ոլորտի ընտրության հնարավորություն, որում նա շահագրգռված է մասնակցել:

«Տարբեր արագությունների» Եվրոպան հիմնվում է ԵՄ ինստիտուտների համար մշակված և բոլոր անդամ-պետությունների կողմից հաստատված գործողությունների պլանի վրա: Ըստ այդմ, առավել զարգացած պետությունները կարող են միավորել իրենց ջանքերն ինտեգրման առավել բարձր մակարդակում՝ միաժամանակ նախատեսելով որոշակի ժամանակահատվածում մյուս պետությունների մասնակցությունն ապահովող համապատասխան մեխանիզմներ: Այդպիսով, յուրաքանչյուր պետություն կարող է ընթանալ դեպի բոլորի համար ընդհանուր նպատակներ այն ռիթմով, որն առավելապես է համապատասխանում իր հնարավորություններին ու շահերին:

Եթե «տարբեր արագությունների» գաղափարը կենտրոնանում է ինտեգրման գործընթացի ժամանակային գործոնի վրա, ապա «տատանվող երկրաչափությունը» գերազանցապես վերաբերում է տարածական գործոնին և իրենից ներկայացնում ինտեգրման առավել վերացական մոդել<sup>1</sup>:

Այս մոդելի արտահայտություններից է հանդիսանում, այսպես կոչված «ամուր միջուկի» հայեցակարգը, ըստ որի եվրոպական ինտեգրման առաջամարտիկը պետք է դառնա պետությունների առաջատար մի խումբ՝ ցանկացած անդամ-պետության անդամակցության համար բաց «ամուր միջուկը», որը ենթադրում է երեք մակարդակների գոյություն, որոնցից առաջինը նեղ՝ Գերմանիայի և Ֆրանսիայի, երկրորդը՝ առաջին մակարդակի և Բենիլյուքսի երկրների մասնակցությամբ: «Միջուկը» կազմող պետությունները պետք է ուղղորդեն ընդհանուր գործընթացը ԵՄ նոր «քաղաքականությունների» և նախաձեռնությունների ներդրմամբ:

Այդ գաղափարի զարգացած տարբերակը՝ «կենտրոնացված շրջանները», կազմում են ինտեգրման երեք մակարդակները: Բազային շրջանն իրենից ներկայացնում է տնտեսական կազմակերպություն ԵՄ բոլոր անդամների մասնակցությամբ, որոնց մի մասը գտնվում է անցումային շրջանում: Երկրորդ մակարդակը բնութագրվում է բոլոր

<sup>1</sup> Տե՛ս Stubb A. C. A Categorization of Differentiated Integration// Journal of Common Market Studies. 1996. N 2. P. 284.

ուրրտներում ինտեգրման բարձր մակարդակով և ենթադրում է մասնակիցների սահմանափակ թիվ, իսկ երրորդը միավորում է բոլոր եվրոպական պետությունները՝ ներառյալ ԵՄ անդամ չհանդիսացողներին: Այս սխեման ենթադրում էր «շրջանների» աստիճանական մերձեցում՝ ընդհուպ դրանց լիարժեք միաձուլումը ողջ Եվրոպայի միասնական «շրջանում»:

Մյուս ազդեցիկ տեսական ուղղությունը *հաղորդակցության* տեսությունն է, որի հեղինակավոր ներկայացուցիչն է Կ. Դոյչը: Նրա կարծիքով, սոցիալական հաղորդակցությունները կազմում են այն «շինանյութը», որից ստեղծվում են տեղական համայնքները, ապա, հետևողական հասարակական զարգացման շնորհիվ, ազգային պետությունը<sup>1</sup>: Նման գործընթացներ տեղի են ունենում նաև միջազգային ոլորտում, երբ պետությունները ձգտում են կառուցել «անվտանգության ընկերակցություն»՝ պետությունների խումբ, որոնք հասել են միմյանց հետ ինտեգրման նշանակալի մակարդակի և գիտակցել են որոշակի միասնության անհրաժեշտությունը: Այլ կերպ ասած, անվտանգության ընկերակցությունները միջազգային կազմավորումներ են, որոնց շրջանակներում պետությունները ձգտում են նվազագույնի հասցնել պատերազմի վտանգը: Իսկ այդ նպատակի իրագործումը հնարավոր է միայն այն դեպքում, եթե մասնակից-պետությունները դառնան ինտեգրված:

Այս տեսության վիճելի հիմնադրույթներից մեկն անվտանգության ընկերակցության կազմավորման հարցում իշխանական որոշումների ընդունումը դրանց վրա սոցիալական հաղորդակցության ազդեցությամբ պատճառաբանելն է, քանզի փաստ է, որ հասարակական հարաբերությունների զարգացումը հակասական գործընթաց է, բովանդակում է ինչպես կենտրոնաձիգ, այնպես էլ կենտրոնախույս միտումներ, որոնցից յուրաքանչյուրի դիրքերի ամրապնդումը կոնկրետ ժամանակահատվածում կարող է հանգեցնել տարբեր արդյուքների:

*Ռեալիզմի* ներկայացուցիչները, հիմք ընդունելով այն իրողությունը, որ միջազգային հարաբերություններում չկա կենտրոնական իշխանություն, գտնում են, որ պետությունները ստիպված են կողմնորոշվել, առաջին հերթին, դեպի իրենց պաշտպանության, անվտանգության և սեփական շահերի առավել լիարժեք բավարարման հարցերը: Պետությունների միջև համագործակցությունը կառուցվում է ազգային շահերի ընդհանրության հիմքով, իսկ հակադրություններն ու հակամարտություններն առաջ են գալիս դրանց տարբերության հիմքով:

Պետության արտաքին քաղաքականության հանգուցակետը հանդիսանում է անվտանգության խնդիրը, որի ապահովման գլխավոր միջոցը ռազմական ներուժն է:

<sup>1</sup> St' u Bergmann K. Ibid. S. 215



Բայց մի պետության ռազմական ներուժի կուտակումը և անվտանգության ամրապնդումն անխուսափելիորեն հանգեցնում է այլ պետությունների անվտանգության թուլացման: Փորձելով լուծել այդ երկրնտրանքը՝ պետությունները հարկադրված են համագործակցել միմյանց հետ, հակառակ դեպքում՝ նրանց հիմնարար շահերի միջև հակասությունների խորացումը կարող է դառնալ երկուստեք անցանկալի հակամարտությունների հիմք:

Այս տեսանկյունից ազգային պետությունների համակարգը վերազգային ղեկավարման միջոցով ջնջելու ձգտումը երևակայական է, քանզի միջազգային հարաբերությունների համակարգի բնական վիճակը հանդիսանում է յուրաքանչյուր պետության՝ իր անվտանգության ապահովման հոգսը, որը ստիպում է նրանց համագործակցել միմյանց հետ: Այս համագործակցությունը համակարգը դարձնում է ընդհանուր առմամբ ինքնակարգավորվող:

Իրենց հերթին *ազատականության* ներկայացուցիչները ելնում են այն հանգամանքից, որ պետությունների փոխգործակցությունն ունի պատերազմներին վերջ տալու, խաղաղությունն ու տնտեսական բարգավաճումն ամրապնդելու նպատակ: Այս համատեքստում պետությունները դիտարկվում են որպես միջազգային հարաբերությունների գլխավոր, բայց ոչ միակ ակտորներ: Նրանց կողքին գործում են նաև միջկառավարական և ոչ կառավարական տարբեր կազմակերպություններ: Ավելին, պետությունները ոչ միայն ձգտում են առավելագույնի հասցնել կարճաժամկետ շահույթը, այլև առավել մեծ օգուտ ստանալ փոխշահավետ համագործակցությունից<sup>1</sup>:

*Պատմական ինստիտուցիոնալիզմի* հետևորդները տալիս են եվրոպական ինտեգրման իրենց մեկնաբանությունը: Առաջին ինտեգրացիոն ինստիտուտները ստեղծվել են անդամ-պետությունների կողմից որոշակի պատմական պայմաններում և որոշակի նպատակներով, որոնք հանգամանքների փոփոխության պատճառով վերացել կամ փոխակերպվել են, բայց ընդունված որոշումները բացել են համագործակցության տրամաբանական զարգացման ուղի, որն անհնար էր կանխատեսել ԵԸ ստեղծման պահին: Այդ ժամանակ ստեղծված մի շարք ինստիտուտներ գոյություն ունեն նաև այսօր: Նրանք ունեն ակտորների նպատակների ու նախասիրությունների վրա ազդելու և, այդկերպ, քաղաքական իրավիճակներ և քաղաքական որոշումներ ստեղծելու ունակություն:

Այսպես, ամփոփելով ինտեգրման հայեցակարգերն ու վերլուծելով եվրոպական ինտեգրման գործընթացի զարգացման արդի միտումները, կարելի է եզրակացնել, որ, թեև նշված հայեցակարգերից յուրաքանչյուրը յուրովի է մեկնաբանում ու գնահատում եվրոպական ինտեգրման գործընթացը, այդուհանդերձ, դրանք, ըստ էության, վերաբերում

<sup>1</sup> St' u Kategorii politicheskoy nauki, Учебник. М., 2002, с. 594-595, 604

են ինտեգրման տարբեր կողմերին: Այդ հանգամանքը նշված հայեցակարգերը դարձնում է բավականաչափ համատեղելի: Այսպես, ժամանակակից ԵՄ քաղաքական համակարգի զարգացման մեջ հստակ ուրվագծվում են դաշնայնացման միտումներ (օրինակ՝ Մասստրիխտյան պայմանագրով ԵՄ պրակտիկայի մեջ սուբսիդիարության սկզբունքի ներմուծումը): Հստակորեն ուրվագծվում են նաև բազմամակարդակ ղեկավարման համակարգի սահմանները՝ ներառելով ենթաազգային՝ տեղական ինքնակառավարման, ազգային-պետական և վերազգային-եվրոպական մակարդակները, որոնց ներկայումս ավելանում է նաև ենթատարածաշրջանային մակարդակը պետությունների տարածաշրջանային իշխանությունների տեսքով:

Եվրոպական ինտեգրումը բազմամակարդակ գործընթաց է: Դա արտահայտվում է նրանում, որ, մի կողմից, նոր անդամներին որոշակի ժամանակ է անհրաժեշտ ինտեգրման լիարժեք մասնակից դառնալու համար, իսկ մյուս կողմից, ոչ բոլոր անդամներն են հակված ակտիվորեն մասնակցելու ինտեգրման առաջադիմական նախաձեռնություններին, մասնավորապես, քաղաքական ինտեգրման հարցում:

Միաժամանակ, ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ ԵՄ-ը՝ որպես եվրոպական ինտեգրման ինստիտուցիոնալ արտահայտություն կամ ամրագրում, ներառում է ոչ միայն ինտեգրացիոն կամ վերազգային ինտեգրման հարաբերություններ, այլև միջկառավարական զարգացած համագործակցություն, մասնավորապես, քաղաքական ինտեգրման այնպիսի կարևորագույն հարթության վրա, ինչպիսին արտաքին և անվտանգության քաղաքականությունն է: Այդ իսկ պատճառով եվրոպական ինտեգրման ուսումնասիրության համատեքստում իր արդիականությունը չի կորցնում նաև միջկառավարական մոտեցումը:

Վերլուծելով եվրոպական ինտեգրման միջավայրը, դրա շրջանակներում տեղի ունեցող գործընթացները, ինչպես նաև ինտեգրացիոն միջավայրի փոխազդեցությունը ԵՄ ինտեգրացիոն համակարգի հետ՝ ակնհայտ է դառնում ինտեգրման համատեքստում հանգուցային նշանակություն ունեցող ազգային, մասնավորապես ռազմաքաղաքական անվտանգության ու տնտեսական բարգավաճման շահերի տեսանկյունից, մի կողմից, հաղորդակցության տեսության՝ որպես անվտանգության եվրոպական ընկերակցության կառուցման, իսկ մյուս կողմից, քաղաքական ցանցերի հայեցակարգի՝ որպես եվրոպական ինտեգրացիոն համակարգի շրջանակներում պետությունների փոխգործակցության էությունը բացահայտող մոտեցումների արդիականությունն ու արժեքավորությունը:

Ընդհանուր առմամբ, եվրոպական ինտեգրման գործընթացի առանձնահատկությունը կայանում է նրանում, որ այն ունի գերազանցապես տնտեսաքաղաքական նպատակներ, իսկ բուն ինտեգրումն իրականացվում է

քաղաքական մեթոդներով: Այս համատեքստում վաղուց արդեն անվիճելի է ինտեգրման գործընթացում նորաֆունկցիոնալիստական «ցայտյունի» էֆեկտի առկայությունը, որն այժմ ակնհայտ է ոչ միայն տնտեսական, այլ այդտեղից՝ քաղաքական ինտեգրման ոլորտում:

Այսպիսով, եվրոպական ինտեգրումը չի տանում դեպի ազգային-պետական ձևերի մահացման: Սակայն այն փոխում է ենթաազգային, ազգային և վերազգային քաղաքականության ակտորների փոխհարաբերությունները: ԵՄ ինտեգրացիոն համակարգը հասարակական կյանքի շատ բնագավառներում այսօր արդեն կարող է ընդունել պարտադիր կատարման ենթակա այնպիսի որոշումներ, որոնք նախկինում կարող էին ընդունել միայն ազգային պետությունները: Միաժամանակ հարկ է նշել, որ արդեն քսանհինգ պետություն ներառող ԵՄ-ը միտված է զարգացնել ու ծավալել անդամ-պետությունների համագործակցությունը՝ իրատեսորեն հաշվի առնելով յուրաքանչյուրի շահերն ու նպատակները, համաձայնությունների ու փոխզիջումների միջոցով ապահովել համակողմանի, այդ թվում՝ քաղաքական ինտեգրման առաջընթացը: